ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ անվանի դերասանուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սվետլանա Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի շենքի ճակատային հատվածում /Վազգեն Սարգսյան փող. 7/ փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՎԵՏԼԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, հայ անվանի դերասանուհի Սվետլանա Գրիգորյանը ծնվել է 1930 թ. սեպտեմբերի 30-ին, Երևանում:

1949թ. ավարտել է Երևանի թատրոնի ինստիտուտը:

1949թ. Երևանի Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի դերասանուհի է:

1957-1986թթ. հեռուստաթատրոնում խաղացել է 20-ից ավելի դերեր՝ հիմնականում գլխավոր:

Հիսունհինգ տարի խաղացել է Կարպ Խաչվանքյանի հետ: Խաղացել է հարյուրից ավելի դերեր:

Սվետլանա Գրիգորյանն իր անձնավորած կերպարներից շատերն ու գլխավորները կերտել է մեծանուն Վարդան Աճեմյանի անմիջական աջակցությամբ, նրա ղեկավարությամբ ու խորհուրդներով:

Աշխատել է օպերետային ժանրի վարպետաց-վարպետների հետ, փոխառնելով նրանց փորձը:

Ծավալել է վաթսուն տարվա բեմական բուռն գործունեություն Երևանի Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում: Ունի 150-ից ավելի դերակատարումներ՝ Սիմա («Մի քաղաք կա Վոլգայի վրա»), Մարիետա («Բայադերա»), Կոլոմբինա («Վենետիկյան երկվորյակներ»), Լիքսենա («Պարերի ուսուցիչը»), Նունուֆար («Հին հիվանդություն»), Մարթա («Ատամնաբույժն արևելյան»), Ժաննա («Ռոզ Մարի»), Նատա («Սոֆիկի սխալը»), Դիաննա («Այլոց համար հիմար, իրեն համար խելոք»), Ռոզալյա («Չանիտայի համբույրը»):

Բազմաթիվ դերակատարումներով Սվետլանա Գրիգորյանը դրսևորել է ստեղծագործական իր հնարավորությունները, քանդակային կերպարներ ստեղծելու իր կարողությունները, սակայն նրա բեկումնային դերը եղել է Ժիկվան («Տիկին Միսիստրուին»): Թատրոնի պատմության ցայտուն կերպավորումներից են Ռոզը («Տաքսի-տաքսի») և Սաթենիկը («Իմ զոքանչը»):

Սվետլանա Գրիգորյանը հյուրախաղերով հանդես է եկել աշխարհի բազմաթիվ երկրներում, արժանացել է միջազգային մրցանակների: 2004թ. արժանացել է «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչմանը: Արժանացել է նաև բազմաթիվ պարգևների և շքանշանների՝ «Մովսես Խորենացի», Սուրբ Էջմիածնի կողմից՝ «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ»:

2009թ. Լոս Անջելեսում նրան շնորհվել է «Ծիծաղի թագուհի» տիտղոսը:

2011թ. պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին

աստիճանի մեդալով:

Սվետլանա Գրիգորյանը կյանքից հեռացել է 2014թ. մայիսի 12-ին, Երևանում:

Հայ անվանի դերասանուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սվետլանա Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի շենքի ճակատային հատվածում /Վազգեն Սարգսյան փող. 7/ փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից: Հուշատախտակի ֆինանսական ծախսերը կատարվելու են ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ